

Agreed Conclusions

Կանանց կարգավիճակի կոմիտեի ամենամյա նիստերի սկզբունքային արդյունքները հրապարակվում են «Համաձայնեցված Եզրափակիչ դրույթում»: Դրանք ներառում են առաջնահերթ խնդիրների վերլուծություն, ինչպես նաև կոնկրետ ցուցումներ՝ կառավարությունների, միջկառավարական մարմինների, քաղաքացիական հասարակությունների համար, որոնք պետք է ներդրվեն միջազգային, ազգային, տարածքային և տեղական մակարդակներում:

2016թ. 60-րդ հանձնաժողովի արհմիութենական մասով առաջնահերթ խնդիրների Եզրափակիչ դրույթներն են՝

Ընդհանուր մեկնաբանություններ

- Փաստաթղթերում «բոլոր կանաց և աղջիկների» արտահայտության կիրառումը, որպեսզի բացառվի որևէ անձանց խմբի անտեսումը:
- Մի շարք օրենսդրային հոդվածներում նշել արհմիությունները որպես քաղաքացիական հասարակության մաս:
- Մենք դեմ ենք ազգային իրականության հաշվի առնելուն՝ իրավունքների հարցում, և այդպիսի հոդվածները պետք է ջնջվեն: Իրավունքը ունիվերսալ հասկացություն է:
- Սեռական և վերարտադրման առողջության ու իրավունքի, սեռական կրթության, գենդերային հավասարության և սեռական օրիենտացիայի վերաբերյալ հոդվածներում պետք է խստացնել և հստակեցնել ձևակերպումները:

Կրթություն

Հստակեցնել և ուժեղացնել ձևակերպումները, ինչպիսիք են՝

- *աղջիկներին հիմնական կրթությամբ ապահովելը* փոխարինել *որակյալ կրթությամբ ապահովել*
- *Նախնական կրթությունը* փոխարինել *նախնական և բարձրագույն կրթությամբ*

Տնտեսական ուժեղացում

- Կանանց հիմնական իրավունքներին վերաբերյալ հոդվածներում *աշխատանքի ապահովումը* փոխարինել *ամբողջական, արդյունավետ, անվտանգ և արժանապատիվ աշխատանք* ձևակերպմամբ:

■ *Կանանց բառը փոխարինել կանանց և աղջիկների բառով:*

■ *Ավելացնել և հստակեցնել ձևակերպումները կապված որակյալ կոմունալ ծառայությունների, անվտանգ աշխատանքի, անվտանգ խմելու ջրի, որակյալ և անվտանգ բժշկության, բոլոր տեսակի մարդու իրավունքների արժանապատիվ աշխատանքային հարաբերությունների ու կոլեկտիվ պայմանագրերի, կառավարման և որոշումների կայացման, և մի շարք այլ ոլորտների հասանելիության հետ կապված:*

Կոմունալ ծառայություններ

■ *Ապահովել, որպեսզի կոմունալ ծառայություններ մատուցող մասնավորեցված ընկերություններն ու պետական-մասնավոր գործընկերությունները ենթարկվեն ամբողջական ֆինանսական, բնապահպանական և սոցիալական ռիսկերի անկախ փորձաքննությունների ու վերստուգումների, հաշվի առնելով նաև մարդու իրավունքների, գենդերային հավասարության և բոլոր կանանց և աղջիկների դերի ուժեղացման գործոնները: Ապահովել, որպեսզի հիմնական հանրային ծառայությունները, ինչպիսիք են առողջապահությունը և սոցապահովությունը, կրթությունը, ջրամատակարարումը, աղբահանությունը և տրանսպորտը չենթարկվեն մասնավորեցման և մատակարարվեն կառավարությունների կողմից, առանց որևէ մասնավոր գործընկերության և ադալադված ֆինանսական միջամտություններով:*

Աշխատանքային իրավունքներ

■ *Ապահովել, որպեսզի մասնավոր ընկերություններն ու դրանց վերադաս կորպորացիաները ենթարկվեն անկախ և պարբերական վերստուգման՝ ներառելով մարդու իրավունքների, առևտրային ու ներդրումային պայմանավորվածությունների գործոնները, և դրանց համապատասխանումը Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներին:*

Հարկեր և ֆինանսներ

■ *Կառավարություններին բարելավել հարկերի հավաքագրումը, կատարել ռեֆորմներ հարկային դաշտում, որպեսզի բարձրացվեն հանրային եկամուտները (նույնն է պետ. բյուջեն): Ըստ այդմ ավելի շատ գումարներ հատկացնել պետական ծրագրերին՝ ուղղված գենդերային ճեղքի փոքրացմանը, և գենդերային հավասարությամբ ու մարդու իրավունքներով զբաղվող ինստիտուտների առաջխաղացմանը:*